ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 45/4

10 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ավտոդաս» ՍՊԸ 08.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 01.09.2015 թ-ի թիվ 6108930 ակտի դեմ:

«Ավտոդաս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի ժ/պ 07.08.2015 թ-ի թիվ 6108930 հանձնարարագրի համաձայն՝ «Ավտոդաս» ՍՊԸ իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և օրենքով սահմանված ելակետային տվյալների ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում կազմվել է թիվ 6108930 ստուգման ակտը, որով արձանագրվել է, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ում առանց աշխատանքային պայմանագրի փաստացի աշխատում են 15 (տասնհինգ) աշխատակիցներ, ինչի արդյունքում Ընկերությունը տուգանվել է 9.000.000 դրամի չափով:

Ծանոթանալով և ուսումնասիրելով ստուգման ակտը, ընկերությունը գտնում է, որ այն կազմված է ոչ ճիշտ և պարունակում է ոչ հավաստի տվյալներ, ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70 և 71-րդ հոդվածներով ներկայացվում է սույն գանգատը:

Ըստ ակտի, ստուգման արդյունքում պարզվել է, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ում փաստացի աշխատանքային գործնեությամբ զբաղվող 15 աշխատակիցներ աշխատանքի են ընդունվել առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևակերպման: Ստուգում իրականացնողների կողմից նշված փաստը, մասնավորապես՝ չձևակերպված աշխատողների նշված թիվը, չունի ոչ մի հիմնավորում:

Ստուգումն իրականացնելու պահին ակտի մեջ նշված ենթադրյալ չգրանցված աշխատողներից ութի, մասնավորապես՝ Արթուր Հովսեփյանի, Կարեն Սադոյանի, Ալեքսանդր Աղայանի, Գևորգ Վարդանյանի, Կարապետ Հակոբյանի, Մանվել Գևորգյանի, Անդրանիկ Աբրահամյանի, Գրիգոր Սիմոնյանի հետ Ընկերությունը ուներ կնքած արդեն իսկ աշխատանքային պայմանագրեր, որն էլ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է հաշվառման համապատասխան մարմնին (ամփոփ հաշվարկը կցվում է): Ակտում ներառված անձանցից Արմեն Սարգսյանը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր և Ընկերության հետ ունի 29.10.2012 թ-ին կնքած վարձակալության պայմանագիր, այսինքն՝ վերջինս չէր կարող հանդիսանալ Ընկերության աշխատակից: Իսկ Արտաշես Միքայելյանն Ընկերությունում, համաձայն վերջինիս հետ 10.08.2015 թ-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի, իրականացնում էր հաստոցների վերանորոգում: Այսինքն, Արտաշես Միքայելյանը ևս Ընկերությունում փաստացի չգրանցված աշխատող համարվել չէր կարող: Տվյալ դեպքում ստուգման ակտով ներգրավված 15 աշխատակիցներից 10 Ընկերության հետ ունեին կնքած պայմանագրեր, ուստի նրանց որպես չգրանցված աշխատողներ ներկայացնելն անհիմն է:

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ հարկային տեսուչների կողմից ակտի հիմքում դրվել են կեղծ, ոչ հավաստի տեղեկություններ ինչի արդյունքում ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ (ստուգման ակտ)՝ Ընկերության վրա դնելով ակնհայտ ոչ

իրավաչափ պարտավորություն: Հարկային տեսուչների շուտափույթ գործողությունների արդյունքում պատշաճ ստուգում չի իրականացվել, իսկ Ընկերության հաշվապահը շփոթված և տեղյակ չլինելով չի ներկայացրել համապատասխան պայմանագրերը:

Ըստ ակտի Ընկերությունում ստուգումներն իրականացրել են թվով 11 հարկային տեսուչ, սակայն ստուգման ակտը ստորագրել են ընդամենը 6 հարկային տեսուչ:

Նկատի ունենալով, որ ստուգման ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է վարչական ակտ, ուստի նույն օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն այն պետք է ստորագրված լիներ ստուգումն իրականացրած բոլոր 11 տեսուչների կողմից, ինչը չի արվել:

Վարչական մարմինն Ընկերությանը ուղարկելով վարչական ակտը (ստուգման ակտը) կից գրության մեջ նշել է հետևյալը.

«Նկատի ունենալով այն, որ Դուք հրաժարվել եք ծանոթանալ, ստորագրել և ստանալ թիվ 6108930 ակտի օրինակը, ուստի այն Ձեզ է ուղարկվում փոստի միջոցով»:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ պարբերության համաձայն, տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի՝ ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ակտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում:

Ստուգման ակտում Ընկերության ղեկավարի կամ ներկայացուցչի կողմից ակտին ծանոթանալու, ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու մասին ոչ մի գրառում առկա չէ: Ավելին, Ընկերությանը նշված ակտը ոչ ոք չի ներկայացրել, որի ղեկավարն էլ հրաժարվել է նման գործողություն կատարելուց: Նույն եղանակով վարչական մարմինը ներկայացրել էր նաև ակտի նախագիծը, սակայն այս դեպքում ակտի նախագծում կատարել են գրառում տնտեսվարող սուբյեկտի ստանալուց և ստորագրելուց հրաժարվելու մասին, ինչը նույնպես իրականությանը չի համապատասխանում: Նման ձևով վարչական մարմինը փորձել է իր գործողությունների ընթացքն արագացնել ու տպավորություն ստեղծել, որ Ընկերությունը հրաժարվում է ակտն ստանալուց:

Ընկերության կողմից 16.09.2015թ. վարչական մարմին դիմում է ներկայացվել և խնդրվել «Վարչարարության հիմունքներր և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն տրամադրել ստուգման ակտի կազմման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերի պատճենները: Վարչական մարմինը մինչ օրս ոչ գրավոր, ոչ էլ բանավոր դիմածին պատասխան չի տվել, խախտելով Ընկերության, որպես վարույթի մասնակցի վարչական վարույթի նյութերի մատչելիության իրավունքը:

Գանգատում մեջբերված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ և 77-րդ հոդվածների դրույթները:

Ամփոփելով սույն գանգատամ բերված փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումներն ընկերությունը գտնում է, որ ստուգման ակտը կազմված է օրենքի խախտմամբ և կեղծ տեղեկությունների հիման վրա, ինչը հիմք է վարչական ակտի բեկանման ու փոփոխման համար:

Միաժամանակ, թիվ 6108930 ստուգման ակտի հիմքով 16.09.2015 թ-ին Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է թիվ 297875/03 որոշումն և Ընկերության տնօրենի նկատմամբ նշանակվել է վարչական տույժ՝ 750.000 դրամի չափով և արգելանք դրվել անձնական հաշիվների վրա: Վարչական ակտն անվավեր ճանաչելու պարագայում անհրաժեշտ է կիրառել նաև անվավերության հետևանքներ:

Սույն բողոքի պայմաններում ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու դեպքում անհրաժեշտ է որպես հետևանք վերանայել նաև թիվ 297875/03 որոշումը

նշանակված տուգանքի չափով և վերացնել տնօրենի անձնական հաշիվների վրա դրված արգելանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով ընկերությունը խնդրում է վերանայել թիվ 6108930 առ 01.09.2015թ. ստուգման ակտը, փոփոխել այն՝ ընկերությունում առանց աշխատանքային պայմանագրի աշխատակիցների թիվը հաշվարկել 5 անձով և ըստ այդմ հաշվարկել վճարման ենթակա եկամտային հարկը, որպես հետևանք վերանայել թիվ 297875/03 առ 16.09.2015 թ-ի որոշումն և տույժը հաշվարկել միայն չգրանցված 5 /հինգ/ աշխատակիցների մասով, միաժամանակ վերացնելով Ս.Հովհաննեսյանի դրամական միջոցների վրա դրված արգելանքը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 07.08.2015 թ–ի թիվ 6108930 հանձնարարագրի համաձայն «Ավտոդաս» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 01.09.2015 թ–ի թիվ 6108930 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 9.000.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված 15 աշխատակիցների՝ Արթուր Բաղալյանի, Գրիգոր Սիմոնյանի, Անդրանիկ Աբրահամյանի, Ստեփան Տեր-Բարսեղյանի, Գևորգ Վարդանյանի, Արթուր Հովսեփյանի, Միեր Սահակյանի, Ալեքսանդր Աղայանի, Կարապետ Հակոբյանի, Արսեն Մարտիրոսյանի, Անդրանիկ Թորոսյանի, Արմեն Սարգսյանի, Արտաշես Միքայելյանի, Մանվել Գևորգյանի և Կարեն Սադոյանի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չի եղել, բացակայել են գրավոր աշխատանքային պայմանագրերը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները:

Խախտվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի և 85-րդ հոդվածի պահանջները: Հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները եկամտային հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 9.000.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ակտում նշված թվով ութ անձանց վերաբերյալ, որոնք ստուգմամբ դիտարկվել են որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատողներ, սահմանված կարգով՝ մինչև ստուգման փաստացի սկսելը, կնքված են եղել աշխատանքային պայմանագրեր: Մասնավորապես, ընկերության թվով ութ աշխատակիցների՝ Արթուր Հովսեփյանի, Կարեն Սադոյանի, Ալեքսանդր Աղայանի, Գևորգ Վարդանյանի, Կարապետ Հակոբյանի, Մանվել Գևորգյանի, Անդրանիկ Աբրահամյանի, Գրիգոր Սիմոնյանի և Ընկերության միջև 03.08.2015 թ-ից մինչև 07.08.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում սահմանված կարգով կնքվել են աշխատանքային պայմանագրեր:

Վերոգրյալ անձանց հետ աշխատանքային պայմանագրեր կնքված լինելու մասին, ըստ էության, ընկերության գլխավոր հաշվապահը տեղեկացված չի եղել, ինչն էլ իր հերթին հիմք է հանդիսացել վերջինիս կողմից ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց 11.08.2015 թ-ին տրված հայտարարությունում ոչ հավաստի տվյալների արտացոլման համար:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Սահմանափակ փատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընկերության գործադիր մարմինը (գլխավոր տնօրենը, նախագահը և այլք) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն Ընկերության գործադիր մարմնի դերում կարող է հանդես գալ միայն ֆիզիկական անձը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի գ) կետի համաձայն՝ Ընկերության գործադիր մարմինը տալիս է հրամաններ՝ ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից հետևում է, որ ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ հարցերի կարգավորման լիազորությունը վերապահված է ընկերության տնօրենին:

Քննարկվող դեպքում, ընկերության տնօրենի և ընկերության վերոգրյալ թվով 8 աշխատակիցների հետ մինչև ստուգման փաստացի սկսելը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված են եղել աշխատանքային պայմանագրեր, որոնց առկայության վերաբերյալ ընկերության գլխավոր հաշվապահը դեռ տեղեկացված չի եղել: Ընդ որում, այդ անձանց վերաբերյալ տվյալները սահմանված կարգով արտացոլվել են ընկերության կողմից 2015 թ-ի օգոստոս ամսվա համար ներկայացված «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկ»-ում:

Ինչ վերաբերվում է Ակտում հիշատակված Արմեն Սարգսյանին և Արտաշես Միքայելյանին, որոնք նույնպես դիտվել են որպես ընկերությունում գործունեություն իրականացնող, սակայն սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատողներ, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Արմեն Սարգսյանը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր (գործում առկա Ա/Ձ-ի վկայականը), որի հետ Ընկերությունը 29.10.2012 թ-ին կնքել է վարձակալության պայմանագիր: Նշված պայմանագրի համաձայն Ընկերությունն իրեն պատկանող Անդրանիկի 3/1 հասցեում գտնվող շենքի ոչ բնակելի տարածքը, ավտոպահեստամասերի վաճառք իրականացնելու նպատակով վարձակալությամբ է հանձնել Ա/Ձ Արմեն Սարգսյանին:

Ակտում նշված Արտաշես Միքայելյանի վերաբերյալ հարկ է նշել, որ Ընկերության և Արտաշես Միքայելյանի միջև 10.08.2015 թ-ին կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որի համաձայն Արտաշես Միքայելյանը պարտավորվել է 10.08.2015 թ-ից մինչև 15.08.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել հաստոցների վերանորոգման և գործարկման աշխատանքներ:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ակտում հիշատակված թվով 15 անձանցից 10-ը չեն կարող դիտարկվել որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատողներ: Հետևապես, այդ անձանց գծով Ակտով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները ենթակա են նվազեցման:

Հարկ է նշել նաև, որ Ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 16.09.2015 թ-ի թիվ 297875/03 որոշումը

կայացնելու համար: Մասնավորապես, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 10.09.2015 թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Հովհաննիսյանը, համաձայն ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 01.09.2015 թ-ի թիվ 6108930 ակտի, առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքի ընդունման պահանջները բավարարող աշխատանքային պայմանագրերի կնքման պահել է 15 վարձու աշխատող: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 16.09.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 297875/03 որոշումը՝ Սամվել Հովհաննեսյանի նկատմամբ 750.000 դրամի չափով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում, նկատի ունենալով, որ Ակտում հիշատակված թվով 10 անձանց վերաբերյալ լրացուցիչ առաջադրված պարտավորությունները ենտակա են նվազեցման, հետևապես նվազեցման է ենթակա նաև ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 297875/03 որոշմամբ այդ անձանց գծով կիրառված պարտավորությունը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

1. ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 01.09.2015 թ-ի թիվ 6108930 ակտի 1-ին կետով առաջադրված պարտավորությունը՝ գումարով 9.000.000 դրամ, նվազեցնել 8.250.000 դրամի չափով:
2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 297875/03 որոշմամբ կիրառված տուգանքը՝ գումարով 750.000 դրամ, նվազեցնել 500.000 դրամի չափով:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**